Ես չեմ սիրում նոր բաներ փորձել, որովհետև ես միշտ սխալվում եմ: Ես ինչպե՞ս վարվեմ:

—Կատարյալը Պանամա Սիթիում

Սիրելի Կատարյալ,

Միգուցե կարծում եք, որ եթե ամեն ինչ կատարյալ չեք անում, ապա անհաջողակ եք: Բայց դա այդպես չէ: Իրականում սխալները կարող են օգնել ձեզ սովորել և կատարելագործվել:

Երկնային Հայրն օգնում է մեզ քայլ առ քայլ սովորել (տես Վարդապետություն և Ուխտեր 98.12): Կատարյալ լինելու վրա կենտրոնանալու փոխարեն, փորձեք կենտրոնանալ աճելու և կամաց-կամաց Նրան ավելի նմանվելու վրա: Փնտրեք այն, ինչ լավ եք անում: Աշխատեք փոխարինել ձեր մասին բացասական մտքերը դրականով: Ամենակարևորը, երբ սխալ ես թույլ տալիս, կամ նույնիսկ 20 սխալ, խոր շունչ քաշիր, աղոթիր և շարունակիր:

Սիրով՝

Ընկեր ամսագիր

ՆԿԱՐԸ՝ ՋՈՇ ԹԱԼԲՈՒՐ

Այս խզբզոցները վերածեք արվեստի

Ինչ-որ մեկը սկսել էր այս նկարները, բայց դադարել էր նկարել՝ մտածելով, որ դրանք բավականաչափ լավը չեն: Օգտագործեք ձեր ստեղծարար միտքը՝ յուրաքանչյուր նկարը ավարտին հասցնելու համար: Տեսնենք, թե ինչ կարող է տեղի ունենալ, երբ մենք շարունակում ենք փորձել: